ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 19.11.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ԳԲԽ-ԷՍ-2018/109

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ քննելով «ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ նաև Ընկերություն) կողմից 29.10.2018թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. **«ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.**

«ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ-ն 29.10.2018թ. Բողոքներ քննող անձին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

««Թիվ 19 պոլիկլինիկա» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից պոլիկլինիկայի վերանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է Թ19ՊՈԼ-ԳՀԾՁԲ-18/6 ծածկագրով գնման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգին մասնակցելու նպատակով 15.10.2018թ. հայտ է ներկայացրել միայն «ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև Ընկերություն):

«ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ-ի կողմից պայմանագրի կատարման համար նախատեսված ընդհանուր գինը կազմում է 1.100.000 ՀՀ դրամ, որի 1 տոկոսը հավասար է 11.000 ՀՀ դրամի:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.10.2018թ. ժամը 12:00-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ 1-ին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել «ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ-ն:

Նույն արձանագրության համաձայն՝ հանձնաժողովը որոշել է 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների մասով հարցում ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ նաև՝ Կոմիտե) պարզելու ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ ունենալու կամ չունենալու վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 22.10.2018թ. ժամը 15:00-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրության.

1.1 կետի համաձայն՝ Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հարցում է ներկայացվել Կոմիտե:

1.2 կետի համաձայն՝ Կոմիտեի կողմից համապատասխան ժամկետում տրվել է եզրակացություն:

1.3 կետի համաձայն՝ «ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ-ն 15.10.2018թ. դրությամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի ժամկետանց պարտավորություն 41.000 ՀՀ դրամի չափով:

1.4 Հիմք ընդունելով Կարգի 44-րդ կետը, հանձնաժողովը որոշել է մերժել «ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ-ի հայտը:

Ընկերությունը համաձայն չէ վերը նշված որոշման և Կոմիտեի եզրակացության հետ քանի որ, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2018թ. ապրիլի 11-ի թիվ 245-Ա հրամանով սահմանված հավելվածի՝ հարկ վճարողի անձնական հաշվի քարտի 15.10.2018թ. «ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ-ի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների, դեբետային գումարների, սահմանված չափից ավել վճարված գումարների, միասնական հաշվում առկա գումարների, հարկային մարմնի տեղեկատվական բազայում առկա տեղեկությունների հիման վրա պաշտոնական քաղվածքի (այսուհետ նաև՝ Քաղվածք) համաձայն՝ Ընկերությունը ընդհանրապես չունի հարկային պարտավորություններ, այլ ունի դեբետային մնացորդ՝ 49.451 ՀՀ դրամի չափով:

Ընկերությունը հիմք ընդունելով վերոնշյալ պաշտոնական Քաղվածքից վերցված տվյալները և համոզված լինելով, որ «ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ-ի հարկային պարտավորությունների

ճափը չի գերազանցում Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված շեմը, հայտ է ներկայացրել և մասնակցել է Ընթացակարգին:

Սակայն, ի զարմանս Ընկերության, պարզվել է, որ «ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի ժամկետանց պարտավորություններ:

Ցանկանում ենք նշել, որ դրոշմանիշային վճարի մասով Քաղվածքի մեջ որևէ նշում չկար և Ընկերությունը չէր կարող տեղեկանալ կամ կանխատեսեր, որ դրոշմանիշային վճարը հանդիսանում է հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտ, քանի որ 2018թ. ընթացքում մասնակցելով բազմաթիվ մրցույթների նման խնդիր Ընկերության մոտ չի առաջացել: Եթե դրոշմանիշային վճարը համարվում է հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություն, ապա այս պարագայում ստացվում է, որ Ընկերությունը 2018թ. ընթքացքում պետք է ունենար այդ պարտավորությունը և այն պետք է արտացոլված լիներ թե Քաղվածքի, թե Կոմիտեի կողմից տրված եզրակացություններ մեջ, սակայն մինչև այս մրցույթը նման խնդիր չի առաջացել: Իսկ եթե Կոմիտեի կողմից կատարվել է նման փոփոխություն, ապա այս պարագայում առնվազն առկա է իրազեկման խնդիր, որպեսզի մրցույթի մասնակիցները տեղեկացված լինեին և կատարեին համապատասխան վճարումները:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի (այսուհետ նաև՝ կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին:

Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը՝ էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝

հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 44-րդ կետի համաձայն՝ կոմիտեն սույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից: Սույն կետով նախատեսված որակավորման չափանիշի գնահատման ժամանակ հաշվի է առնվում սույն կարգի 47-րդ կետով նախատեսված ընթացակարգը:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին: Սույն կարգի 44-րդ կետով սահմանված՝ մասնակցության իրավունք չունենալու հիմքերի առկայության դեպքում սույն կետով նախատեսված տվյալները չեն ներկայացվում լիազորված մարմին, եթե մասնակիցը կամ կոմիտեն լրացուցիչ տեղեկատվությունը

ներկայացրել է մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացվում է ինչպես առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից՝ կոմիտեից ստացված գրավոր տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովին ներկայացմամբ, այնպես էլ կոմիտեի կողմից տրված նոր տեղեկատվությամբ: Ընդ որում, գնահատող հանձնաժողովի կամ քարտուղարի կողմից կոմիտեին կրկնակի հարցում չի կատարվում:

Օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի և գնումների բողոքարկման խորհրդի գործողությունները (անգործությունը) և որոշումները:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի սույն օրենքի համաձայն նախքան պայմանագրի կնքումը բողոքարկելու պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշում-ները գնումների բողոքարկման խորհրդին:

Օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ եթե բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է՝պայմանագիր կնքելու որոշումը, ապա բողոքը ներկայացվում է սույն օրենքի 10-րդ հոդվածով նախատեսված անգործության ժամանակահատվածում:

Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ խորհուրդը իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ,

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման,

Նույն հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ բողոքի քննությունը բաց է հանրության համար, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների: Բողոքն ստանալու օրվանից հաշված՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում, այդ մասին խորհուրդը հայտարարություն է հրապարակում տեղեկագրում:

Օրենքի 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Գնումների բողոքարկման խորհուրդ ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ սույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ:

Այսպիսով, գտնում ենք, որ «ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ-ն բավարարել է Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված պահանջներին, քանի որ տվյալ դեպքում, Ընկերությունը թիվ ԹՅ19ՊՈԼ-ԳՀԾՁԲ-18/6 ծածկագրով ընթացակարգի արդյունքում՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացնելու պայմաններում ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից, սակայն Կոմիտեի կողմից տրված եզրակացության պատճառով զրկվել է պայմանագիր կնքելու հնարավորությունից, դրանով իսկ «մեկուսացվելով» պայմանագրի կողմ հանդիսանալուց:

Գտնում ենք, որ Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություններ «իրականում» չի ունեցել, քանի որ, ինչպես արդեն նշվել է Ընկերությունը հիմք ընդունելով պաշտոնական Քաղվածքից վերցված տվյալները և համոզված լինելով, որ «ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ-ի հարկային պարտավորությունների չափը չի գերազանցում Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված շեմը, հայտ է ներկայացրել և մասնակցել է Ընթացակարգին, տեղեկացված կամ իրազեկված չլինելով, որ Կոմիտեն դրոշմանիշային վճարները այսուհետ դիտարկվում է որպես հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտ և այդ պարտավորությունները չկատարելը կարող է դիտարկվել որպես ժամկետանց հարկային պարտավորություն, ինչն էլ հիմք է հանդիսացել Ընկերության հայտը մերժելուն:

Ի լրումն 29.10.2018թ. ներկայացված բողոքի «ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ-ն 08.11.2018թ. գրավոր դիրքորոշմամբ հայտնել է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 22.10.2018թ. ժամը 15:00-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրության.

1.1 կետի համաձայն՝ Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հարցում է ներկայացվել Կոմիտե:

1.2 կետի համաձայն՝ Կոմիտեի կողմից համապատասխան ժամկետում տրվել է եզրակացություն:

1.3 կետի համաձայն՝ «ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ-ն 15.10.2018թ. դրությամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի ժամկետանց պարտավորություն 41.000 ՀՀ դրամի չափով:

1.4 Հիմք ընդունելով Կարգի 44-րդ կետը, հանձնաժողովը որոշել է մերժել "ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ-ի հայտը:

Պատվիրատուն www.gnumner.am կայքում հրապարակել է ԹՊՊՈԼ-ԳՀԾՁԲ18/6 ծածկագրով գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարությունը, որը 07.11.2017թ. ուղարկվել է Ընկերության էլ. փոստի հասցեին:

«Թիվ 19 պոլիկլինիկա» ՓԲԸ-ի կողմից պոլիկլինիկայի վերանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է ԹՊՊՈԼ-ԳՀԾՁԲ-18/7 ծածկագրով գնման ընթացակարգ:

ԹՊՊՈԼ-ԳՀԾՁԲ-18/7 ծածկագրով նոր հայտարարված գնման ընթացակարգի գնման առարկան, տեխնիկական պայմանները ամբողջությամբ նույնն են, ինչ ԹՊՊՈԼ-ԳՀԾՁԲ-18/6 ծածկագրով նախկինում հայտարարված և տվյալ պահին վիճարկվող Ընթացակարգինը:

Այս պարագայում, գնման նոր ընթացակարգ հայտարարված լինելու դեպքում, Ընկերությունը փաստացի կարող է զրկվել պայմանագիր կնքելուց, քանի որ Բողոքներ քննող անձի կողմից բողոքը բավարարելու պարագայում վերջնական արդյունքում կողմերի միջև պետք է կնքվի պայմանագիր: Հետևաբար պետք է պարտավորեցնել Պատվիրատուին ԹՊՊՈԼ-ԳՀԾՁԲ-18/7 ծածկագրով հայտարարված նոր գնման ընթացակարգը հայտարարել չկայացած, որպեսզի բողոքը բավարարելու դեպքում երաշխիքներ լինեն ապահովելու հարուցված բողոքով ապագա որոշման կատարումը, քանզի հակառակ դեպքում արդարադատությունը կկրի երևակայական բնույթ և Բողոքներ քննող անձի որոշումը կմնա անկատար:

Բացի այդ հայտնում ենք, որ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2018թ. ապրիլի 11-ի թիվ 245-Ա հրամանով սահմանված հավելվածի՝ հարկ վճարողի անձնական հաշվի քարտի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ «ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ-ի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների, դեբետային գումարների, սահմանված չափից ավել վճարված գումարների, միասնական հաշվում առկա գումարների, հարկային մարմնի տեղեկատվական բազայում առկա տեղեկությունների հիման վրա պաշտոնական քաղվածքի (այսուհետ նաև՝ Քաղվածք) համաձայն՝ Ընկերությունը ընդհանրապես չունի հարկային պարտավորություններ, այլ ունի դեբետային մնացորդ՝ 49.451 ՀՀ դրամի չափով:

«ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ-ն Բողոքներ քննող անձին ներկայացված բողոքով խնդրել է.

Պարտավորեցնել «Թիվ 19 պոլիկլինիկա» ՓԲԸ-ին դադարեցնել.

1. Թ19ՊՈԼ-ԳՀԾՁԲ-18/6 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 22.10.2018թ. ժամը 15:00-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշումը.

2. Թ19ՊՈԼ-ԳՀԾՁԲ-18/6 ծածկագրով գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին որոշումը.

3. Թ19ՊՈԼ-ԳՀԾՁԲ-18/7 ծածկագրով գնման ընթացակարգը հայտարարել չկայացած:

Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էր «ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ-ի կողմից լիազորված ներկայացուցիչ Ռաֆայել Մկրտչյանը:

2. «Թիվ 19 պոլիկլինիկա» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 4-րդ մասով՝ Բողոքներ քննող անձը դիմել է «Թիվ 19 պոլիկլինիկա» ՓԲԸ-ին՝ խնդրելով բողոքի վերաբերյալ որոշում կայացնելու նպատակով, նույն հոդվածով սահմանված ժամկետում Բողոքներ քննող անձին տրամադրել գրավոր դիրքորոշում, սակայն վերջինիս կողմից որևէ դիրքորոշում չի ներկայացվել:

«Թիվ 19 պոլիկլինիկա» ՓԲԸ-ն պատշաճ ծանուցվել է Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն ՓԲԸ-ի կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

3. ԳԲԽ-ԷՍ-2018/109 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է «ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ նաև Ընկերություն) կողմից 29.10.2018թ ներկայացրած բողոքը և կից փաստաթղթերը, Թ19ՊՈԼ-ԳՀԾՁԲ18/6 և Թ19ՊՈԼ-ԳՀԾՁԲ18/7 ծածկագրերով գնանշման հարցման հրավերները Թ19ՊՈԼ-ԳՀԾՁԲ18/6 ծածկագրով գնանշման հարցման հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 15.10.2018թ. ժամը 12:00-ին կայացած նիստի թիվ 2 և 22.10.2018թ. ժամը 15:00-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրությունները, Թ19ՊՈԼ-ԳՀԾՁԲ18/7 ծածկագրով գնանշման հարցման հանձնաժողովի (այսուհետ՝ նաև

Հանձնաժողով) 07.11.2018թ. ժամը 12:00-ին կայացած նիստի թիվ 2 և 13.11.2018թ. ժամը 15:00-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրությունները, 15.10.2018թ. դրությամբ Ընկերության՝ «Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի» քաղվածքը, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 06.11.2018թ. «ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ-ին 15.10.2018թ. դրությամբ տրված թիվ 9/1337 տեղեկանքը, Ընկերության կողմից Ընթացակարգին ներկայացված մասնակցության հայտի պատճենը, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 18.10.2018թ. տրված եզրակացությունը.

«Թիվ 19 պոլիկլինիկա» ՓԲԸ-ի կարիքների համար՝ «Թիվ 19 պոլիկլինիկա» ՓԲԸ-ի վերանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է Թ19ՊՈԼ-ԳՀԾՁԲ18/6 ծածկագրով գնանշման հարցում (այսուհետ նաև՝ ընթացակարգ), որին մասնակցության հայտ է ներկայացրել միայն «ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ-ն:

Ընկերության կողմից առաջարկված գնային առաջարկը կազմել է 1.100.000 ՀՀ դրամ:

Ընկերությունը ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված հայտի N2 հավելվածով՝ ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին համապատասխանելու մասին հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում Թ19ՊՈԼ-ԳՀԾՁԲ18/6 ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

Հանձնաժողովը՝ 15.10.2018թ. կայացած նիստի թիվ 2 արձանագրության.

- 9-րդ կետով որոշել է Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով հաղթող մասնակից ճանաչել «ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ-ին:
- 10-րդ կետով որոշել է ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե հարցում կատարել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների առկայության վերաբերյալ:

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 18.10.2018թ. տրամադրած եզրացության համաձայն՝ «ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ-ն հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է ժամկետանց պարտավորություն՝ 41.000 ՀՀ դրամ գումարի չափով:

Հանձնաժողովը՝ 22.10.2018թ. կայացած նիստի թիվ 3 արձանագրության 1.4 կետով որոշել է «ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժել:

«Թիվ 19 պոլիկլինիկա» ՓԲԸ-ն 23.10.2018թ. Թ19ՊՈԼ-ԳՀԾՁԲ18/6 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը հայտարարել է չկայացած:

Նշված ընթացակարգը չկայացած հայտարարելուց հետո «Թիվ 19 պոլիկլինիկա» ՓԲԸ-ն 30.10.2018թ. կրկին նույն ծառայությունները ձեռք բերելու նպատակով հայտարարել է Թ19ՊՈԼ-ԳՀԾՁԲ18/7 ծածկագրով գնանշման հարցում:

Բողոքի քննության նպատակով կայացած նիստի ժամանակ «ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ-ի ներկայացուցիչը Բողոքներ քննող անձին հայտնեց, որ Թ19ՊՈԼ-ԳՀԾՁԲ18/6 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 18.10.2018թ. տրամադրած եզրակացության համաձայն՝ «ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ (15.10.2018թ.) ունի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություն՝ 41.000 ՀՀ դրամ գումարի չափով, որը գոյացել է «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշների վճարների գծով: Ընկերության ներկայացուցիչը հավելեց նաև, որ «Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի» քաղվածքի համաձայն՝ հայտը ներակայացնելու օրվա դրությամբ (15.10.2018թ.) հարկային մարմինների կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություններ առկա չեն: Բողոքաբերը Բողոքներ քննող անձին տեղեկացրեց, որ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 06.11.2018թ. «ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ-ին 15.10.2018թ. դրությամբ տրված թիվ 9/1337 տեղեկանքի համաձայն՝ նշված պարտավորությունը դրոշմանիշային վճարների գծով է:

Միաժամանակ Ընկերության ներկայացուցիչը Բողոքներ քննող անձին ներկայացրեց նաև «Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի» 15.10.2018թ. դրությամբ քաղվածքը հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների վերաբերյալ, որի համաձայն Ընկերությունը հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություններ չունի, ինչպես նաև ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 06.11.2018թ. «ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ-ին 15.10.2018թ. դրությամբ տրված թիվ 9/1337 տեղեկանքը:

ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 2017թ. հուլիսի 19-ի թիվ 228-Ն հրամանի համաձայն՝ սահմանված են վերհսկվող եկամուտների գծով պարտավորությունների հետևյալ

հարկատեսակները՝ ԱԱՀ, շահութահարկ. եկամտային հարկ, ակցիզային հարկ, շրջանառության հարկ, արտոնագրային հարկ, բնապահպանական հարկ, ոչ ռեզիդենտի շահութահարկ, սոցիալական վճար, պետական տուրք, բնօգտագործման վճար, այլ հարկային եկամուտներ:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի՝

• 32-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին,

• 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը.

• 44-րդ կետի համաձայն՝ կոմիտեն նույն կարգի 43-րդ կետի 3-ին ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի

կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:

«Թիվ 19 պոլիկլինիկա» ՓԲԸ-ի կարիքների համար՝ «Թիվ 19 պոլիկլինիկա» ՓԲԸ-ի վերանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված Թ19ՊՈԼ-ԳՀԾՁԲ18/6 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի 1-ին մասի՝

• 7.12 կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ Հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը՝ էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև սույն հրավերի 1-ին մասի 2.5 կետով նախատեսված՝ «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը: Ընդ որում նույն ենթակետում հարցումն ուղարկվում է Lena_Najaryan@taxservice.am էլեկտրոնային փոստի հասցեին նույն հրավերի 7-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան՝ էլեկտրոնային նամակի պատճենները միաժամանակ ուղարկելով karine_sargsyan@taxservice.am, gor_mkrtchyan@taxservice.am և procurement@minfin.am էլեկտրոնային փոստի հասցեներին.

• 7.13 կետի համաձայն՝ կոմիտեն նույն հրավերի 1-ին մասի 7.12 կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին սույն հրավերի 8-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան տեղեկատվություն: Նույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է Օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում սույն հրավերով «ֆինանսական

միջոցներ» որակավորման չափանիշի պահանջներին և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մեժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրված տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացը գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջությունն է, ներառյալ գնումների պլանավորումը, գնման առարկայի բնութագրերի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը:

Օրենքի 6-րդ հոդվածի՝

• 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ.

• 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

• 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

- ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 18.10.2018թ. Հանձնաժողովին ներկայացրած եզրակացության համաձայն՝ «ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ-ի ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտը ներկայացնելու օրվա (15.10.2018թ.) դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների գումարը կազմել է 41.000 ՀՀ դրամ:

- «ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ-ի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունը առաջացել է «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշների վճարների գծով:

- ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 2017թ. հուլիսի 19-ի թիվ 228-Ն հրամանի համաձայն՝ սահմանվել են վերհսկվող եկամուտների գծով պարտավորությունների վերաբերյալ տրվող տեղեկանքի ձևը, որտեղ՝ «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշների վճարը որպես հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություն, նախատեսված չէ:

- «ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ-ն հայտը ներակայացնելու օրը առաջնորդվել է Ընկերության «Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի» տվյալներում առկա տեղեկատվությամբ, որի համաձայն՝ «ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ-ի՝ հայտը ներակայացնելու օրվա (15.10.2018թ.) դրությամբ հարկային մարմինների կողմից վերահսկվող եկամուտների գծով որևէ պարտավորություն առկա չէ:

Բողոքներ քննող անձը գտնում է, որ «ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ-ի գնման գործընթացին հետագա մասնակցության դադարեցումը պայմանավորված է եղել Ընկերության իրազեկված չլինելու հանգամանքով, քանի որ Ընկերությունն արձանագրված հարկային պարտավորության առկայության վերաբերյալ տեղեկությունը կարող էր ձեռք բերել բացառապես Ընկերության՝ հարկ վճարողի անձնական հաշվի քարտի քաղվածքի տվյալներում առկա տեղեկատվությունից:

Բողոքներ քննող անձը գտնում է նաև, որ տվյալ դեպքում արձանագրված պարտավորությունը չի կարող դիտարկվել «ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ-ի՝ հայտը ներակայացնելու օրվա (15.10.2018թ.) դրությամբ հարկային մարմինների կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «բ» ենթակետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ-ի կողմից 29.10.2018թ ներկայացրած բողոքը բավարարել:
2. Պարտավորեցնել Թ19ՊՈԼ-ԳՀԾՁԲ-18/6 ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովին ընդունել՝ 22.10.2018թ. ժամը 15:00-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրությամբ և Թ19ՊՈԼ-ԳՀԾՁԲ-18/6 ծածկագրով գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին որոշումները դադարեցնելու մասին համապատասխան որոշում:
3. Պարտավորեցնել Թ19ՊՈԼ-ԳՀԾՁԲ-18/7 ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովին ընդունել՝ Թ19ՊՈԼ-ԳՀԾՁԲ-18/7 ծածկագրով գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին համապատասխան որոշում:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ